

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

« 15 » հունվարի 2020թ.

N Վ-2/40

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակից Լ. Ուզունյանի կողմից 09.12.2019 թվականին հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում, մասնավորապես՝ քաղաքացի Դիքրան Քարքուրի Թանկրյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող Քաջագնունու փողոցի հ. 8/2 հասցեում ինքնակամ իրականացվել է բնակելի տան լրացուցիչ մուտքի կազմակերպման, մասնավորապես՝ պատուհանի բացվածքը դռան բացվածքի վերակառուցման շինարարական աշխատանքներ նոր դռան տեղադրմամբ, ինչպես նաև աստիճանավանդակի կառուցման շինարարական աշխատանքներ, որի վերաբերյալ 10.12.2019 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 032608 արձանագրությունը (այսուհետ՝ արձանագրություն):

Որպես իրավախախտման փաստը հաստատող ապացույց, իրավախախտման հայտնաբերման պահին լուսանկարվել է իրավախախտման վայրը:

Հայտնաբերված իրավախախտման փաստով Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

Քաղաքացի Դիքրան Քարքուրի Թանկրյանը ծանուցված լինելով 15.01.2020 թվականին կայանալիք գործի քննության տեղի և ժամանակի մասին չներկայացավ, ուստի Օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործը քննվեց վերջինիս բացակայությամբ:

Գործի քննության ընթացքում ուսումնասիրվեցին արձանագրությունը, սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 13.01.2020 թվականի 51/44-124027 գրությունը, լիազորագիրը և իրավախախտման լուսանկարները:

Գործի փաստական հանգամանքների և դրանում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հիմնավորվեց, որ քաղաքացի Դիքրան Քարքուրի Թանկրյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող Քաջագնունու փողոցի հ. 8/2 հասցեում ինքնակամ իրականացվել է բնակելի տան լրացուցիչ մուտքի կազմակերպման՝ պատուհանի բացվածքը դռան բացվածքի վերակառուցման և նոր դռան տեղադրման շինարարական աշխատանքներ, ինչպես նաև աստիճանավանդակի կառուցման շինարարական աշխատանքներ, որով թույլ է տվել Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում:

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219.1-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, Երևանի քաղաքապետի 23.08.2013 թվականի թիվ 4180-Ա որոշմամբ (փոփոխ. 08.07.2015 թվականի թիվ 2104-Ա, 01.08.2017 թվականի թիվ 2645-Ա, 12.07.2018 թվականի թիվ 2516-Ա)՝

### ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի Դիքրան Քարբուրի Թանկրյանին Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ կենտրոնական գանձապետարանի N 900015211239 հաշվին:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական և դատական կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ՝



ՎԱՂԻՆԱԿ ԱՆԱՆՅԱՆ